

Հ Ո Ղ Վ Ա Ճ Ն Ե Ր

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԷՂ. Մ. ՋՐԱՍՏՅԱՆ

Ուզում եմ ուշադրություն հրավիրել Եղիշե Չարենցի բանաստեղծական ժառանգության մի կողմի վրա, որը, ինչքան մեզ հայտնի է, չարենցագիտական բավական հարուստ գրականության մեջ առայսօր հատուկ քննության նյութ չի դարձել: Թեև, խոստովանենք, երևույթը թաքնված չէ գրողի ստեղծագործության ներքին ծալքերում, այլ մատչելի է նույնիսկ անմիջական ընկալման համար:

Բայց մախ շարադրենք խնդրի հետ կապված հիմնական փաստերը:

1932 թվականին Ե. Չարենցը լույս ընծայեց «Երկեր» սովոր ժողովածուն, իբրև իր անցած 20-ամյա գրական ճանապարհի հանրագումար: Սակայն հայտնի է, որ այդ հատորը կազմելիս բանաստեղծը շատ խիստ ընտրություն է կատարել՝ առաջին շրջանի որոշ ժողովածուներ ու բանաստեղծական շարքեր առհասարակ դուրս թողնելով («Երեք երգ տխրադալուկ աղջկան», «Ծիածանը», «Տաղարան», «Կապուտաչա հայրենիք», «Էմալե պրոֆիլը Չեր», «Կոնալմանախ» և այլն), իսկ մյուսները ենթարկելով մեծ կրճատումների («Ողջակիզվող կրակ», «Պտեզոգունա», «Փողոցային պչոտիում» և այլն): Այսպես վարվելով՝ Չարենցը ղեկավարվել է գեղարվեստական խստապահանջության չափանիշներով, բայց ավելի մեծ դեր են խաղացել ժամանակի գաղափարական արժեքները, որոնք 30-ական թթ. սկզբին՝ «դասակարգային պայքարի սրման» պայմաններում, անհնար էին դարձնում մախիկնում գրված շատ գործերի, օրինակ՝ «Տաղարանի» կամ «Ծիածանի» վերահրատարակությունը:

Ասվածի լույսի ներքո ավելի ցայտուն է երևում մի տարբերություն՝ 1932 թ. տպագրված ժողովածուի մեջ Չարենցն առանց որևէ կրճատման կամ փոփոխության մտքով է դրանից երկու տարի առաջ՝ 1930 թ. առանձին գրքով հրատարակված «Եպիքական լուսաբաց» գիրքը: Ավելին, «Եպիքական լուսաբաց» այս նոր տպագրության սկզբում մա մի շատ էական լրացում է կատարել՝ առաջին անգամ հրատարակելով «Մուսայիս» ծրագրային բանաստեղծությունը, ուր «երգի դիցուհին» կերպարամափոխությունների միջոցով այլաբանորեն ներկայացվում են բանաստեղծի անցած ուղու փուլերն ու դասերը: Ուրեմն, «Եպիքական լուսաբացի» անվթար տեղափոխությունը մի գրքից մյուսի մեջ ցույց է տալիս, որ այդ գրքի գաղափարական և գեղարվեստական համակարգը Չարենցի համար մնում էր անվիճելի, թեև անցած երկու տարիներին այն ենթարկվել էր շատ բիրտ հարձակումների:

Բայց Չարենցը ոչ միայն հավաստեց իր հավատարմությունը «Եպիքական լուսաբացի» մեջ հռչակված սկզբունքներին, այլև «Երկեր» գրքում առաջին անգամ ընթերցողին ներկայացրեց նույն սկզբունքները շարունակող մի նոր շարք՝ «Լիրիքական անտրակտ» բազմանշանակ վերնագրով: Շարքը կազմված է երեք բաժնից. ա) «Մանկություն» քնարական պոեմը, բ) «Ars poetica» («Արվեստ քերթության»), որի մեջ մտնում է 21 բանաստեղծություն, գ) «Եպիգրամներ և սատիրական բանաստեղծություններ» կազմված 23 միավորից: Նշված բոլոր գործերը գրված են 20-ական թվականների վերջին, բայց, ինչպես հատուկ զգուշացնում էր բանաստեղծը «Երկերի» առաջաբանում, «գանազան պատճառներով մտցված չեն եղել «Եպիքական լուսաբացի» մեջ»: Այդ շարքով էլ ավարտվում է հատորի չափածո բաժինը, որին հաջորդում են թարգմանություններն ու արձակ էջերը:

Չարենցի ստեղծագործական կենսագրության փաստերն իրավունք են տալիս ասելու, որ «Լիրիքական անտրակտ» շարքը պատահական մի բան չէր, այլ սկզբից և էք մտահղացվել է իբրև ավելի մեծ մի միավորի՝ մի յուրօրինակ **բանաստեղծական եռագրության** մասերից մեկը (եթե օգտվենք Ա. Բլոկի արտահայտությունից): Դիշտ է, այս շարքի բանաստեղծություններից շատերը, մանավանդ «Արվեստ քերթության» բաժնի մեջ մտնող գործերն իրենց բովանդակությամբ սերտորեն հարում են «Եպիքական լուսաբաց» գրքին և կարող էին տեղադրված լինել

նաև վերջինիս մեջ: Բայց «Էպիքական լուսաբացի» ոչ առաջին և ոչ էլ երկրորդ հրատարակության մեջ Չարենցն այդպես չի վարվել, քանի որ դա կհակասեր նրա ստեղծագործական ծրագրին, ըստ որի «Լիբիքական անտրակտը» լինելու էր բանաստեղծական եռագրության երկրորդ մասը՝ դառնալով կապակցող օղակ առաջին և երրորդ մասերի միջև:

Ամտեսելով այդ իրողությունը՝ Չարենցի երկերի որոշ հրատարակություններում և նրան նվիրված աշխատանքներում նկատվում է «Լիբիքական անտրակտն» իբրև ինքնուրույն բանաստեղծաշար վերացնելու և այն «Էպիքական լուսաբացի» հետ խառնելու միտում: Իսկ դա խանգարում է հստակորեն պատկերացնելու Չարենցի այս վիթխարի բանաստեղծական մտահղացումն իր ամբողջության մեջ: Բերենք միայն մեկ և ամենավերջին օրինակը՝ 1997 թ. Ե. Չարենցի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատարակված «Ընտիր երկեր» սովաբաժավ ժողովածուն (կազմողներ՝ Հրանտ Մաթևոսյան, Ֆելիքա Մելոյան և Հրաչյա Թամրազյան): Այստեղ «Էպիքական լուսաբաց» ընդհանուր վերնագրի տակ հավաքվել են «Լիբիքական անտրակտի» գործերի մեծ մասը և դեռ ավելին՝ բազմաթիվ մանր բանաստեղծություններ և էպիգրամներ՝ գրված 20-30-ական թվականներին: Դրանով իսկ խեղաթյուրված պատկերացում է ստեղծվում Չարենցի կազմած բանաստեղծական շարքերի մասին, որոնց ինքնությանը և կառուցվածքին նա առաջնահերթ նշանակություն էր տալիս: Իսկ բանաստեղծի կամքը խախտելու իրավունք մենք չունենք (մի բան, որ ժամանակին արվում էր նաև Վահան Տերյանին հրատարակելիս):

Ասվեց, որ «Լիբիքական անտրակտ» շարքով Չարենցն ավարտում էր 1932 թ. հրատարակած «Երկեր» ժողովածուի չափածոյի բաժինը: Ուրեմն ստացվում է առաջին հայացքից տարօրինակ մի պատկեր. գրքի պոեզիայի բաժինն ավարտվում է «քնարական ընդմիջումով», այսինքն՝ անավարտ խոսքով: Իսկ դա տրամաբանորեն ենթադրում է, որ այդ ժամանակ Չարենցն արդեն ուներ իր բանաստեղծական եռագրության վերջին մասը գրելու հատուկ ծրագիր. չէ՞ որ թատերական ներկայացման անտրակտին (ընդմիջմանը) պետք է գոնե մեկ գործողություն ևս հաջորդի:

Իսկ ո՞րն էր լինելու Չարենցի բանաստեղծական եռագրությունն ավարտող երրորդ եզրափակիչ մասը: Առանց երկմտելու մենք կարող ենք ասել, որ դա լինելու էր «Գիրք ճանապարհի» ժողովածուն՝ Չարենցի «Վերջին մատյանը», նրա բանաստեղծական հանճարի ամենաբարձր, ամենահզոր արտահայտությունը, որը պիտի դառնար և՛ անցած ուղու հանրագումար, և՛ նոր հորիզոններ բացող ճանապարհի սկիզբ:

Ուրեմն՝ «Էպիքական լուսաբաց»-«Լիբիքական անտրակտ»-«Գիրք ճանապարհի»,- սրանք են Չարենցյան եռագրության մասերը՝ կապված որոշ ընդհանուր մտահղացմամբ: 1932 թվականին «Երկեր» հատորը հրատարակելիս Չարենցն արդեն մտքում ուներ իր ապագա զգրքի զաղալիարն ու՝ «հատակագիծը»: Դրանով պետք է բացատրել այն ապշեցուցիչ թափն ու արագությունը, որով ստեղծվեց այդ մեծածավալ գիրքը (նկատի ունենք 1933 թ./տպագրված ժողովածուի առաջին տարբերակը, որն այն ժամանակ արգելվեց և որոշ փոփոխություններով լույս տեսավ միայն հաջորդ տարի): Շուրջ 6.000 տողից կազմված այդ ժողովածուն գրվել է ընդամենը վեց ամսվա ընթացքում՝ 1933 թ. առաջին կիսամյակում (բացառությունները շատ քիչ են, օրինակ՝ «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» քնարական պոեմը, որը գրվել էր դրանից մեկ տարի առաջ՝ 1932 թ. հունիսին): Հատկապես տպավորիչ է գրքի ծավալի մեծ մասը (310 էջից 230-ը) կազմող պոեմների ժամանակագրությունը: Ահա գրքի մեջ մտնող պոեմների շարքը՝ ըստ նրանց գրության ժամանակաշրջանի հերթականության (հինք են ընդունվում բանաստեղծի նշած տարեթվերը).

1933 թ. հունվարին Չարենցը գրում է «Պատմության քառուղիներով» պոեմը,

Հունվարի 24-ին ավարտում է «Նորք» պոեմը,

Փետրվարի 20-ին ավարտում է «Դեպի լյանը Մասիս» պոեմը,

Ապրիլի 6-ին ավարտում է «Մատուցի Դավիթը»,

Ապրիլի 11-12-ին գրում է «Չրահապատ «Վարդան զորավար» պոեմը,

Մայիսի 4-ին ավարտում է «Մահվան տեսիլ» պոեմը,

Հունիսի 24-ին ավարտում է «Համայնական դաշտերի սերմնացաններ» պոեմը,

Հունիսի 29-ին գրում է «Գալիքի որմնադիրները»,

Նույն 1933 թ. հունիսի 18-ին Չարենցն ավարտում է աշխատանքը «Աքիլեոս, թե՞ Պյերո» թատերական ինտերմեդիա-պոեմի վրա, որն սկսել էր գրանից մի քանի տարի առաջ՝ 1929 թ. ապրիլի 29-ին, Թիֆլիսում:

Ավելացնենք, որ նույն ժամանակ՝ 1933 թ. առաջին կեսին (հիմնականում փետրվար ամսին) են գրվել նաև «Տաղեր և խորհուրդներ» բաժնի գործերը, ինչպես նաև «Չանագան բանաստեղծություններ և բարգձմություններ» եզրափակիչ բաժինը:

Այսպես, շատ կարճ ժամանակամիջոցում ստեղծվեց «Գիրք ճանապարհին» հայ բանաստեղծության բարձրագույն, հավերժական զագաթներից մեկը: Հայ գրականության ողջ պատմության մեջ դժվար է ցույց տալ լարված և ոգեշունչ աշխատանքի մի ուրիշ մնացած օրինակ:

Հայտնի է, որ «Գիրք ճանապարհի» ժողովածուի առաջին տարբերակը վերադաս մարմինների կողմից արգելվեց: Նրանից հանվեց «Աքիլլեոս, թե՞ Պյերո» ինտերմեդիան, Չարենցին առաջարկվեց թափուր մնացած 58 էջերում ուրիշ գործեր տեղադրել: Մի կողմ թողնելով այդ հայտնի պատմությունը՝ նրան անդրադառնանք միայն մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից:

Թվում է՝ բնական կլիներ, որ Չարենցն այդ էջերը լրացներ արդեն պատրաստ գործերի հաշվին, օրինակ՝ «Լիբիքական անտրակտից» նոր գրքի մեջ տեղափոխեր «Ars poetica» («Արվեստ քերթության») շարքի բանաստեղծությունները, մասնավորապես որ այդ վերնագրով մի շարք էլ նա որոշեց ստեղծել և տեղադրել գրքի երկրորդ տարբերակի մեջ: Դա զգալի չափով կարագացներ բանաստեղծի համար նվիրական այդ գրքի տպագրությունը: Բայց Չարենցը չզնայ հեշտ դիմադրության ճանապարհով և իրեն տրամադրված «բաց տարածությունը» որոշեց լրացնել բոլորովին անտիպ կամ նոր գրված բանաստեղծություններով: Դրանք կազմեցին «Արվեստ քերթության» և «Գիրք իմացության» բաժինները՝ էպիտ հարստացնելով ժողովածուի բովանդակությունը: Այսպես, իր դեմ ծավալված թշնամական արշավանքին նա պատասխանեց ստեղծագործական ոգեշունչ աշխատանքով՝ դրանով «վրժ լուծելով» բացահայտ և թաքնված թշնամիներից: Դրա համար նա նույնիսկ «շնորհակալ էր» իր ռոտիներից, որոնց մասին նա գրում էր.

*Օ, դու՛ք, որ բիրտ ու բուժ՝ քարկոծել եք ինձ միշտ-
Չե՛ք պատճառել երբեք ինձ տխրություն ու վիշտ-
Չեր խավարի հանդեպ- ոգիս ընդմիշտ հրակ է:-
Եվ ես կարող եմ լույ ձեզ դիֆիրամբ երգել,
Չեր խավարին խոցող, արշավանքին ձեր սև,-
Որ բորբոքել է միշտ իմ լապտերի կրակը:-*

Իսկ մի քանի ամիս անց նույն թեման այսպիսի շրջադարձ ստացավ.

*Գիշերային պահերն այս քո, երբ լապտերի նման վառ
Հուրհուրում է քո մեջ ոգին ստեղծագործ ու պայծառ-
Չարժե՞ն արդյոք տառապանքին ու տրտունջին այս անվերջ
Եվ մարդկային հերյուրանքին՝ անմարելի ու անծայր...*

Այնպիսիները շատ թափանցիկ են և ցույց են տալիս Չարենցի ստեղծագործական նկարագրի ամենաբնորոշ գծերից մեկը՝ գերլարված աշխատանքային վիճակը, որը նրա բնական կացությունն էր: Ու թեև չիրականացավ «մի բողոքյան աշուն» ունենալու նրա նվիրական իղձը, ապա 1933 և 1934 թթ. առաջին կեսերին նա ապրեց ստեղծագործական վերելքի հիբրալի հազվագյուտ պահեր:

Բայց նորից դառնանք այն հարցին, թե «Գիրք ճանապարհի» ժողովածուի երկրորդ տարբերակն ստեղծելիս Չարենցն ինչու՞ ոչ մի տող չվերցրեց «Լիբիքական անտրակտ» շարքից: Բացի ընթերցողին նոր և անծանոթ գործերով ներկայանալու ցանկությունից, այստեղ վճռական դեր խաղաց նաև մտահղացված բանաստեղծական եռագրության երեք մասերի («Էպիքական լրսաբաց»-«Լիբիքական անտրակտ»-«Գիրք ճանապարհի») ինքնությունը մինչև վերջ պահպանելու ցանկությունը: Պարզ է, որ եթե այդ երեք մասերի միջև կրկնվող էջեր լինեին, ապա այդ ինքնությունը էպիտես կխախտվեր, և եռագրության գաղափարը կմնար չիրականացված:

Չարենցի այս վերջին երեք բանաստեղծական կերտվածքները պետք է դիտվեն որոշ ներքին կապի և միասնության մեջ: Եվ այդ դեպքում մենք ավելի շոշափելիորեն կտեսնենք նրա ստեղծագործական ընդգրկումների լայնությունն ու խորքը: Միաժամանակ երբեք չսխալի մոռանալ, որ դրանք ըստ ամենայնի ինքնուրույն և ավարտուն միավորներ են, որոնք չի կարելի քմահաճորեն վերածնել: Այդ պատճառով որևէ արդարացում չունի արդեն հիշատակված նույն ժողովածուի մեջ (1997) «Գիրք ճանապարհին» մի շարք ուրիշ բանաստեղծություններով «լրացնելը» և «հարստացնելու» փորձը: Դա կարող է միայն խարնաշփոթություն առաջացնել:

Իհարկե, գրողի ստեղծագործության տարբեր մասերը միշտ էլ այսպես կամ այնպես կապված են գաղափարական, թեմատիկ և ռճական ընդհանրություններով: Նույնիսկ նրա անցած ուղու հակասությունները ի վերջո պայմանավորված են նրա ստեղծագործական անհատականության միասնական էությամբ: Մակայն գրողի տարբեր երկերի միջև հաճախ լինում են նաև պոետիկային և անմիջական կապեր: Այդ դեպքում, ահա, խոսվում է երկու (դիլոգիա), երեք (տրիլոգիա), չորս (տետրալոգիա) երկերի միասնության, նույնիսկ տասնյակ գործերից կազմված

գրական միավորների մասին: Նրանց մեջ մտնող վեպերը կամ դրամաները, լինելով ինքնուրույն և ավարտուն գործեր, միաժամանակ շարունակում են մեկը մյուսին, ամբողջացնում են գրողի մտահղացումը: Համաշխարհային գրականության մեջ այդպիսի օրինակներ շատ կան՝ սկսած անտիկ աշխարհի դրամատուրգիայից մինչև նոր ժամանակների վիպագրությունը:

Մեր խորին համոզմամբ՝ կարելի է և պետք է խոսել նաև բանաստեղծական երկերի ներքին միասնության մասին, տվյալ դեպքում՝ բանաստեղծական եռագրության վերաբերյալ: Բայց բանաստեղծական ժողովածուների կամ շարքերի միավորման ուրիշ չափանիշներ են հանդես գալիս, առաջին հերթին՝ բանաստեղծական մտածողության ընդհանուր գծերը, նրա զարգացման ներքին կապերն ու հաջորդական աստիճանները: -

Եղիշե Չարենցի նշված երեք գործերը տվյալ երևույթի ամենացայտուն օրինակն են հայ պոեզիայի պատմության մեջ: Մենք այստեղ առանձին-առանձին չենք վերլուծի ոչ այդ եռագրության մասերը, ոչ էլ դրանք իրար կապող ներքին բեմատիկ-գաղափարական անցումները: Ասենք միայն, որ այդ երեք գործերը մի քանի տարվա ընթացքում (20-30-ական թթ. սահմանազխից) Ե. Չարենցի ապրած ստեղծագործական բուռն զարգացման լավագույն վկայությունն են: Ամենից շոշափելի հենց այդ երեք գործերի մեջ է արտահայտվել նրա շարժումը դեպի գեղարվեստական այն իդեալը, որ ինքը՝ Չարենցը, կոչում էր համադրական (սինթետիկ) արվեստ: Մի արվեստ, որի մեջ բնականորեն կարող են զուգակցվել գեղարվեստական մտածողության բոլոր որոշիչ տարրերը, - զգացմունքային անմիջականություն և վերլուծական մտքի խորություն, անցյալի զգաստ ընկալում և ապագայի մեծ սպասում, ազգային և համամարդկային մոտիվների բնական զուգակցում, Արևելքի և Արևմուտքի պոեզիայի ժանրային և գեղարվեստական բազմազան ձևերի օգտագործում: Ոչ մի ուրիշ հայ բանաստեղծի համար այս բոլորն այնպես մատչելի և բնական չի եղել, ինչպես Չարենցի, և ոչ մի տեղ այնպես արդյունավետ չի արտահայտվել, ինչպես «Էպիքական լուսաբաց» (1930), «Լիրիքական անտրակտ» (1932) և «Գիրք ճանապարհի» (1933-1934) գործերում:

Այս դիտողությունների զլխավոր նպատակն է, ասիա, հաստատել Եղիշե Չարենցի այս երկերի ներքին սերտ կապը, և այն, որ դրանք մտահղացվել են որպես մի յուրօրինակ բանաստեղծական եռագրություն: Այդ տեսանկյունից էլ պետք է վերլուծվեն ու գնահատվեն Չարենցի ստեղծագործության շրջայի այդ կարևորագույն օղակները:

1998

Эд. М. Джрбашян - Поэтическая трилогия.- Автор статьи привлекает внимание к одной из важных сторон творческого наследия Егише Чаренца.

В 1932 г. Чаренц опубликовал большой сборник стихов "Сочинения" как итог 20-летнего творческого пути. Однако известно, что составляя эту книгу, поэт строго отбирал стихи из ранних сборников и циклов. Очевидно он руководствовался четкими художественными критериями. Но большую роль в этом отборе играли идеальные запреты времени, которые в начале 30-х годов в условиях обострения классово-борьбы делали невозможным переиздание нескольких ранее опубликованных сборников, например "Песенник" и "Радуга". Однако без сокращений и изменений поэт включил в сборник написанную в 1930 г. книгу "Эпический рассвет", поместив в начале программное стихотворение "Муза", подчеркивая, что остается верен идейным и художественным принципам этой книги.

Автор статьи считает: творческая биография Чаренца позволяет утверждать, что многозначительный цикл "Лирический антракт" стал продолжающей эти принципы частью крупного целого, - поэтической трилогии, явившейся неслучайным фактом творчества Чаренца. Игнорируя этот факт, в некоторых работах, посвященных Чаренцу и изданием его произведений наблюдается тенденция рассматривания "Лирического антракта" как самостоятельного цикла и включения его в состав "Эпического рассвета". А это препятствует четкому представлению о грандиозном поэтическом замысле Чаренца во всей его целостности, в единстве. Это логически подразумевает, что в 1932 г. Чаренц уже имел ясную программу и план последней части своей трилогии, которой, по мнению автора, должна была стать "Книга пути" - последняя книга Чаренца - самое могучее, высшее выражение его творческого гения, итог всего пройденного им пути и начало, открывающее горизонты. Таким образом: "Эпический рассвет" - "Лирический антракт" - "Книга пути" - часть поэтической трилогии Чаренца, связанные между собой общим замыслом. Так что публикуя в 1932 г. "Сочинения" Чаренц уже задумал идею и план будущей книги. Этим обьясняется тот изумительный размах и быстрота, с которой была создана эта объемистая "Книга пути", запрещенная тогда властями и опубликованная только в следующем году. Изъята была интермедия "Ахилл или Пьеро?". В 310 строк. Чаренц пошел по трудному пути наибольшего сопротивления, заполнив это место совершенно новыми стихами, отвечая враждебным выпадам в свой адрес.